ԿԱՐԾԻՔ

Քրիստինե Ստեփանի Բեգլարյանի "Մարդու իրավունքների պահպանության ոլորտում պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեսաիրավական հիմնախնդիրները (ցեղասպանության դեմ պայքարի համատեքստում)" վերտառությամբ ԺԲ.00.01 մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից աշխարհում մարդու իրավունքների պահպանության հիմնախնդիրը նույնքան արդիական է, որքան և դարեր առաջ: Ժամանակի ընթացքում սոսկ փոխվում են հիմնախնդիրների որակը և դրսևորման ձևերը: Ժամակակից մարդն ավելի հաճախ է փորձում ոտնձգել ինչպես համամարդկային արժեքների, այնպես էլ՝ հենց մարդկության դեմ: Այսօր անձը, նրա իրավունքներն ու ազատություններն ավելի քան երբևէ պաշտպանության կարիք ունեն աշխարհակալ նկրտումներով շարժվող մարդկանց, առանձին խմբերի և պետությունների ոտնձգություններից:

Այս համատեքստում ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում: Ատենախոսն իր առջև խնդիր է դրել համալիր տեսական ուսումնասիրության ենթարկել մարդու հիմնական իրավունքների պետական պահպանության և պաշտպանության հիմնախնդիրները՝ կոնկրետ իրավախախտման՝ այն է՝ ցեղասպանության և դրա դեմ պայքարի գործող միջոցների և կառուցակարգերի համատեքստում:

Հարկ ենք համարում արձանագրել, որ ատենախոսի կողմից իրականացված հետազոտությունն առանձնանում է հենց վերոհիշյալ հանգամանքով, քանի որ այն, ըստ էության, ցեղասպանության դեմ պայքարին ուղղված ազգային և միջազգային մակարդակով ձևավորված պրակտիկայի լույսի ներքո մարդու իրավունքների պահպանության և պաշտպանության միջոցների, բնույթի և կառուցակարգերի գիտական մակարդակով համալիր վերլուծության առաջին փորձն է:

Անդրադառնալով ցեղասպանությանը որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, հարկ է նկատել, որ, ցավոք սրտի մեզ՝ հայերիս համար, դրա դեմ պայքարին ուղղված ցանկացած թե՝ գիտական, թե՝ իրավական, թե՝

գործնական գործունեություն, որը կնպաստի նման հանցագործությունների բացահայտմանը, դատապարտմանը կամ կանխելուն ունի ոչ միայն բարոյական, պատմական նշանակություն, այլ նաև խիստ արդիական և էքզիստենցիալ նշանակություն:

Ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս պնդելու, որ Քրիստինե Բեգլարյանին հաջողվել է հասնել իր առջև դրված ուսումնասիրության նպատակներին: Վերոգրյալը հիմնավորվում է ատենախոսի կողմից իր առջև դրված հետևյալ խնդիրների լուծմամբ.

- ժամանակակից նորմատիվ իրավաընկալման հենքի վրա ձևակերպվել է մարդու հիմնարար իրավունքների հասկացությունը,
- բացահայտվել են իրավունքի ներքին կառուցվածքի (իրավունքի կրող, իրավունքի օբյեկտ և իրավունքի հասցեատեր) համատեսական հիմնա-խնդիրները,
- համեմատաիրավական վերլուծության է ենթարկել ցեղասպանությունը՝ որպես հանցագործություն և դրա հիման վրա տրվել է մարդու հիմնարար իրավունքների բնութագիրը,
- ցեասպանության իրավահամեմատական բնութագրիչների հիման վրա բացահայտվել են միջազգային և ռուսական իրավունքում մարդու իրավունքների պետական պահպանության առանձնահատկությունները,
- սահմանվել են ցեղասպանական գործողությունների կանխման և կանխարգելման միջոցով մարդու հիմնարար իրավունքների պահպանության երաշխիքները:

Ուսումնասիրության արդյունքում հեղինակը պաշտպանության հանվող դրույթներում առաջ է քաշում մի շարք դրույթներ, որոնցից որոշների հետ դժվար է չհամաձայնել: Մասնավորապես, հեղինակն առաջ է քաշում այն տեսակետը, որ մարդու իրավունքների և ազատությունների խախտման, և հատկապես՝ ցեղասպանության դեմ պայքարի հարցում պետությունների միջազգային համագործակցության արդյունավետության աստիճանն ուղղակիորեն կախված է առանձին պետությունների ներպետական օրենսդրական մակարդակով տվյալ գործողության/իրավախախտման բնորոշման, ընկալման, սուբյեկտային կազմի

առնչությամբ ձևավորված միասնական հասկացութային ապառատի առկայությունից և միատեսակ իրավական որակումից:

Ատենախոսության տեսական հիմքն են կազմել իրավունքի ընդհանուր տեսության ոլորտում ռուս և այլ արտասահմանյան հանրահռչակ գիտնականների աշխատությունները, ինչպես նաև քրեական և միջազգային իրավունքի ոլորտում ներդրում ունեցող գիտնականների աշխատությունները:

Ատենախոսն իր տեսական դատողությունների ու եզրահանգումների հիմնավորվածությունն ապահովվել է կատարված հետազոտության մեթոդաբանական բազայով, աշխատանքը կատարվել է բավարար քանակի գիտական գրականության և իրավական ակտերի, փաստագրական նյութերի ուսումնասիրության հենքի վրա:

Ատենախոսության սեղմագիրը արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Ուսումնասիրվող թեմայի շրջանակներում հեղինակն հրատարակել է 12 գիտական հոդված, որոնց գրեթե կեսը Հայաստանում Հանրապետությունում և մյուս կեսը՝ Ռուսաստանի Դաշնությունում լույս տեսնող գիտական ամսագրերում: Հրատարակված հոդվածները նույնպես արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Այնուամենայնիվ, ներկայացված թեկնածուական թեզում առկա են որոշ վիճահարույց դրույթներ, որոնք, ընդհանուր առմամբ, չեն նսեմացնում աշխատանքից ստացված դրական տպավորությունը, սակայն ցանկալի կլիներ լսել դրանց առնչությամբ հեղինակի լրացուցիչ հիմնավորումները կամ պարզաբանումները:

Այսպես.

1. Գտնում ենք, որ աշխատանքի առաջին գլխի առաջին պարագրաֆը, որը կրում է "Իրավաընալումը և մարդու իրավունքները. հասկացությունների հարաբերակցությունը", ատենախոսն ծանրաբեռնել է խնդրո առարկային առնչվող, սակայն խիստ հանրաճանաչ, դասագրքային և ոչ վիճահարույց հասկացություններով:

2. Ատենախոսության պաշտպանության հանվող դրույթներում հեղինակն առաջարկում է ընդլայնել ցեասպանության եզրույթի ներքո ընկալվող գործողությունների շրջանակը, այդպիսի գործողությունների թվին դասելով նաև **ցանկացած** գործողություն, որն ուղղված է տվյալ հանրության սոցիալ-մշակութային ասսիմիլյացիային: Այս առումով լրացուցիչ հիմնավորման կարիք ունի "ցանկացած

գործողություն" ձևակերպումը, քանի որ, մեր համոզմամբ, այս կամ այն խմբի սոցիալ-մշակութային ասիմիլյացիան կոնկրետ հանրության մեջ կարող է տեղի ունենալ նաև միանգամայն իրավաչափ և օբյեկտիվ պայմաններում:

Որպես օրինակ դիտարկենք իրավիճակ, երբ որևէ պատճառով իրենց բնօրրանից տեղափոխված որևէ առանձին (ազգային) խումբ, որն իր ապաստանը գտել է այս կամ այն երկրում, տվյալ պետության կողմից ցուցաբերված հոգացության շրջանակներում ստացել է տեղական, ազգային կրթություն, ներգրավվել և ինտեգրվել է տեղի հասարակության մեջ և որոշ ժամանակ անց օբյեկտիվորեն կորցրել է իր սոցիալ-մշակութային ինքնությունը: Եթե շարժվենք ատենախոսի տրամաբանությամբ, ստացվում է ընդունող պետությանը կարող է մեղսագրվել ցեղասպանություն հանցագործությունը: Մինչդեռ հնարավոր է կոնկրետ ազգային խումբն ինքը որևէ ջանք չի գործադրել սեփական սոցիալ-մշակութային ինքնության պահպանման ուղղությամբ՝ կամավոր հրաժարվելով դրանից:

3. Վերևում արդեն իսկ նշվեց, որ մեր կողմից ողջունելի է ատենախոսության պաշտպանության հանվող այն դրույթը, որ բոլոր պետություններում ցեղասպանության ակտի բնորոշման, ընկալման, սուբյեկտային կազմի և այլնի առնչությամբ ձևավորված միասնական հասկացութային ապառատի առկայությունն անհրաժեշտություն է:

Սակայն, գտնում ենք, որ լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի նույն դրույթի երրորդ մասում ներկայացվող այն առաջարկը, որ ցեղասպանության սուբյեկտին անհրաժեշտ է տալ առավել ընդլայնված մեկնաբանություն, որը կներառի ոչ միայն ազգերին, այլ նաև այն խմբերին, որի անդամները տարբերվում են հասարակության մյուս անդամներից որևէ սոցիալ-մշակութային գործոններով: Նախ, ցանկալի կլիներ իմանալ հեղինակի տեսակետը, թե օրինակ ի՞նչ խմբեր են դրանք ենթադրում:

Երրորդ, մեր խորին համոզմամբ միևնույն դրույթում արտահայտված երկու առաջարկներն իրականություն դառնալու դեպքում ուղղակիորեն հակասության մեջ են մտնելու միմյանց հետ և անհնարին են դարձնելու միմյանց միաժամանակյա գոյությունը: Մասնավորապես, մի կողմից հեղինակն առաջարկում է հստակեցնել և միասնականացնել բոլոր պետությունների համար ցեղասպանության հանցակազմի ընկալումը, մյուս կողմից առաջարկում է այդ իրավախախտման սուբյեկտային կազմի

մեջ մտցնել այնպիսի խմբերի, որոնց բնորոշումը պետությունից՝ պետություն, հասարակությունից՝ հասարակություն անխուսափելիորեն տարբերվելու են:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսումնասիրությունը կատարելիս ատենախոսը գտնվել է առավելապես Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև այն հանգամանքը, որ նա տիրապետում է հայերեն լեզվին, ակնալվում էր, որ հեղինակն ատենախոսության հատկապես, դրա երկրորդ մասի հիմքում պետք է դներ նաև Հայաստանում հրատարակված, հայ գիտնականների կողմից կամ Հայոց ցեղասպանությանն առնչվող գիտական աշխատությունները, որոնց պակասը չի զգացվում:

Ավելին, մեզ համար առավել մտահոգիչ է, որ հեղինակը խիստ թռուցիկ կերպով անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը, տալիս է 1915-1918թթ թվագրությունը, մինչդեռ դասագրքային ճշմարտություն է, որ լայն իմաստով ցեղասպանություն է որակվում թուրքերի կողմից հայերի նկատմամբ 1800-ականների վերջից մինչև 1923/24թթ. իրականացվող գործողությունները, իսկ նեղ իմաստով՝ 1915-1923/24թթ:

Եվս մի նկատառում. հեղինակն անդրադառնալով տարբեր ժամանակներում և հատկապես՝ 20-րդ դարում աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող առանձին դեպքերին, որոնք միանշանակ բնորոշվում են որպես ցեղասպանական գործողություններ կամ առնվազն հավակնում են այդպիսի որակման, որևէ կերպ չի անդրադառնում 20-րդ դարի վերջին Ադրբեջանում հայերի նկատմամբ իրականացվող հայտնի գործողություններին (բացառությամբ աշխատանքի 92-րդ էջում հիշատակվող՝ Ադրբեջանի կողմից մեծ քանակով հայկական խաչքարերի վերացման փաստի հիշատակման): Մինչդեռ հակառակի մասին՝ որպես կատարված փաստ հիշատակվում է ատենախոսության 62-րդ էջում:

Այնուամենայնիվ, նշված նկատառումները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, կրում են մասնավոր բնույթ և չեն կարող ազդել աշխատանքի ընդհանուր դրական գնահատականի վրա:

Հետևություն. Քրիստինե Ստեփանի Բեգլարյանի "Մարդու իրավունքների պահպանության ոլորտում պետության իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության տեսա-

իրավական հիմնախնդիրները (ցեղասպանության դեմ պայքարի համատեքստում)" վերտառությամբ թեկնածուական ատենախոսության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հեղինակը ցուցաբերել է հիմնահարցի լավ իմացություն, ներկայացրել է պատշաճ գիտական մակարդակի ավարտուն, ինքնուրույն աշխատանք և արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս
Իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արդ. 1-ին դասի խորհրդական

Ա.Մ.ՓԽՐԻԿՅԱՆ

16.01.2021թ.

Ա. Փխրիկյանի ստորագրությունը հաստատում եմ
Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավար

Ս.ԱՌԱՔԵԼՅԱՆ